ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՄԵՐԺԵՑ ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏԱԼ

Յուլիսի 15ին Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն Խորհուրդը ձեռնամուխ եղաւ Արցախի հարցի քաղաքական քննարկմանը: Օրակարգում դրուեցին երկու փաստաթղթեր, որոնցից առաջինը -Արցախի հայ ժողովրդի պայքարը ազգային-ազատագրական շարժում ճանաչելու- վերաբերեալ յայտնի բանաձեւն էր, եւ երկրորդը, որ առաջարկել էր Լեւոն Տէր Պետրոսեանը: Երկրորդ փաստաթղթի մէջ առաջարկւում էր հաւանութիւն տալ ԼՂԻՄի աշխատաւորութեան լիազօր ներկայացուցիչների 1991թ. Մայիսի 16ի յայտարարութեանը, որով նրանք իրենց պատրաստակամութիւնն են յայտնում բանակցութիւններ սկսել Ադրբեջանի հետ եւ փոխզիջումային լուծումներ գտնել: Առաջարկւում էր նաեւ հաւանութիւն տալ ԽՍՀՄ նախագահ Գորբաչովին լիազօր ներկայացուցիչների Յունիսի 29ին ուղղած նամակին, որը ներկայացնում է մարզում սահմանադրական կարգի հաստատման ծրագիր:

Հարցը օրակարգից հանելու առաջարկները մերժելով, Գերագոյն Խորհուրդը երկարատեւ քննարկումներից յետոյ քուէարկեց երկու բանաձեւերը, որոնցից ոչ մէկը անհրաժեշտ ձայներ չստացաւ: Այնուհետեւ նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի պնդումից յետոյ մէկ անգամ եւս նրա առաջարկը քուէարկութեան դրուեց եւ հաւաքեց ձայների անհրաժեշտ քանակ: